

ՎԱՐԴԳԵՍ ԱՐԱՅԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Ծնվել է 1985 թվականի փետրվարի 21-ին՝ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքում:

2006 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2009 թվականին ավարտել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2014-2019թթ. հանդիսացել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ:

2009 թվականի հունիսի 11-ին պարտադիր զինվորական ծառայության է զորակոչվել ՀՀ ԶՈւ, իսկ 2009 թվականի հուլիսի 28-ից պայմանագրային հիմունքներով զինվորական ծառայության է անցել ՀՀ ԶՈւ-ում:

2009-2011թթ. աշխատել է ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության թիվ 88863 զորամասի կարգապահական մեկուսարանի հերթապահ մասում՝ որպես սպա-հերթապահ, ապա թիվ 29500 զորամասի (Արմավիրի կայազորի ՌՈ բաժին) օպերատիվ բաժանմունքում՝ որպես հետաքննիչ:

2011-2014թթ. աշխատել է ՀՀ ՊՆ քննչական ծառայության Շիրակի կայազորային քննչական բաժնում՝ որպես քննիչ, ապա Երևանի կայազորային քննչական բաժնում՝ որպես քննիչ, այնուհետև՝ ավագ քննիչ և ՀԿԳ քննիչ:

2014-2015թթ. աշխատել է ՀՀ ՊՆ քննչական ծառայության ՀԿԳ քննության բաժնում՝ որպես ՀԿԳ քննիչ, ապա ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերի քննության վարչությունում՝ որպես ՀԿԳ քննիչ:

25.02.2015-09.04.2018թթ. աշխատել է ՀՀ գլխավոր դատախազության ՀԿԳ քննության վարչությունում՝ որպես դատախազ:

09.04.2018-26.09.2019թթ. աշխատել է ՀՀ գլխավոր դատախազության ՀԿԳ քննության նկատմամբ հսկողության վարչությունում՝ որպես դատախազ:

26.09.2019-20.01.2020թթ. աշխատել է ՀՀ գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունում՝ որպես դատախազ:

20.01.2020 թվականից առ այսօր աշխատում է ՀՀ գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունում՝ որպես ավագ դատախազ:

06.12.2020 թվականից հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ (փաստաբանական գործունեության արտոնագրի ժամկետը կասեցված է):

Ունի արդարադատության երկրորդ դասի խորհրդականի դասային աստիճան:

Պարգևատրվել է «ՀՀ զինված ուժեր 20 տարի», «Վազգեն Սարգսյան», «Համագործակցության ամրապնդման համար» մեդալներով:

Ամուսնացած է, ունի մեկ որդի:



ԷԴԳԱՐ ԱՇՈՏԻ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Ծնվել է 1989 թվականի հունվարի 2-ին Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքում:

1996-2006թթ. սովորել է Եղեգնաձոր քաղաքի թիվ 1 միջնակարգ դպրոցում:

2007-2009թթ. անցել է պարտադիր զինվորական ծառայություն ՀՀ զինված ուժերում: Զորացրվել է սերժանտի կոչումով:

2012 թվականին ավարտել է Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2015 թվականին ավարտել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

01.02.2013-14.10.2014թթ. աշխատել է Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

14.10.2014-08.01.2018թթ. աշխատել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

2017-2018թթ. հանդիսացել է ՀՀ փաստաբանական դպրոցի ունկնդիր:

08.01.2018 թվականից առ այսօր աշխատում է ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակում՝ որպես հանրային պաշտպան:

Ունի ՀՀ դատական ծառայության առաջին դասի առաջատար ծառայողի դասային աստիճան:

Ամուսնացած է:

Ունի մեկ երեխա:



ՌԻՄԱ ԱՐԱՐԱՏԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Ծնվել է 1985 թվականի հունվարի 29-ին, Վայոց Ձորի մարզի Ջերմուկ քաղաքում:

2002 թվականին ավարտել է Ջերմուկի թիվ 1 միջնակարգ դպրոցը:

2006 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2008 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2009-2013թթ. սովորել է Երևանի պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտուրայում:

21.08.2008-01.03.2021թթ աշխատել է ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատում՝ որպես դատավորի օգնական:

Ամուսնացած չէ:



ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐՏԻԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ծնվել է 1987թ. հոկտեմբերի 26-ին, Երևան քաղաքում:

1994-1996թթ. սովորել է Երևանի N 139 (ներկայումս՝ Կարեն Դեմիրճյանի անվան), իսկ 1997-2004թթ.՝ Երևանի՝ Մուշեղ Գալշոյանի անվան N 148 միջնակարգ դպրոցում, որն ավարտել է գերազանցությամբ:

2008 թվականին գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2010 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2013 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի ասպիրանտուրան:

2013 թվականին շնորհվել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

12.01.2009-21.02.2011թթ. աշխատել է ՀՀ կառավարության աշխատակազմի իրավաբանական, այնուհետև՝ պետաիրավական վարչություններում՝ որպես փորձագետ:

21.02.2011-11.04.2011թթ. աշխատել է ՀՀ կառավարության աշխատակազմի պետաիրավական վարչությունում՝ որպես առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

08.04.2011-31.07.2012թթ. աշխատել է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազությանում՝ որպես դատախազ:

31.07.2012-28.12.2012թթ. աշխատել է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազությունում՝ որպես ավագ դատախազ:

28.12.2012-04.11.2013թթ. աշխատել է Երևան քաղաքի դատախազությունում՝ որպես դատախազ:

04.11.2013-11.06.2014թթ. աշխատել է ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչությունում՝ որպես դատախազ:

11.06.2014-09.04.2020թթ. աշխատել է ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության

վարչությունում՝ որպես պետի տեղակալ, ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչությունում՝ պետի տեղակալ:

09.04.2020-23.04.2020թթ. աշխատել է թիվ 1 կայազորի զինվորական դատախազությունում՝ որպես դատախազի տեղակալ:

26.06.2021թ.-ից հանդիսանում է փաստաբանական պալատի անդամ:

Ամուսնացած չէ:



ՏԻԳՐԱՆ ՍԱՄՎԵԼԻ ԴԱՎԹՅԱՆ

Ծնվել է 1994 թվականի հունիսի 2-ին Սյունիքի մարզի Կապան քաղաքում:

2001-2009 թթ. սովորել է Երևանի թիվ 186 միջնակարգ դպրոցում, իսկ 2009-2012թթ.՝ Երևանի թիվ 159 ավագ դպրոցում:

2012-2014թթ. անցել է պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն, եղել է սերժանտ և հանդիսացել հրանոթի հրամանատար:

2014-2018թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում և ստացել բակալվրի աստիճան:

2018-2020թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում և ստացել մագիստրոսի աստիճան:

01.06.2018-02.09.2020թթ. աշխատել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

03.09.2020 թվականից առ այսօր աշխատում է ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում՝ որպես դատախազ:

Ունի երկրորդ դասի խորհրդականի դասային աստիճան:

Ամուսնացած է: Ունի մեկ դուստր:



ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄԵՐԻ ՀՈՎԻԿԻ

Ծնվել է 1977 թվականի ապրիլի 15-ին, քաղաք Երևանում:

1997 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2008 թվականին ավարտել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

01.11.1998-01.11.2000թթ. աշխատել է «Հայփոստ»ՊՓԲԸ «Տավուշի փոստատուն դուստր» ՓԲԸ-ում՝ որպես իրավախորհրդատու:

01.11.2000-25.01.2008թթ. աշխատել է Իջևանի պետական քոլեջում՝ որպես հաստիքային դասախոս:

29.01.2008-04.08.2008թթ. աշխատել է ՀՀ հյուսիսային քրեական դատարանի աշխատակազմի գրասենյակում՝ որպես ավագ մասնագետ:

04.08.2008թթ.-28.02.2009թթ. աշխատել է ՀՀ հյուսիսային քրեական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

24.03.2009-16.04.2010թթ. աշխատել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնական:

16.04.2010-11.09.2012թթ. աշխատել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես գրասենյակի պետ:

31.08.2012-28.12.2013թթ. աշխատել է «Շահբազյան և գործընկերներ» ՍՊԸ-ում՝ որպես իրավախորհրդատու:

03.03.2014 թվականից առ այսօր աշխատում է ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակում՝ որպես հանրային պաշտպան:

02.04.2012 թվականից առ այսօր հանդիսանում է փաստաբանների պալատի անդամ՝ փաստաբան:



ՎԱՀԵ ԱՐՍԵՆԻ ԴՈԼՄԱԶՅԱՆ

Ծնվել է 1980 թվականի հոկտեմբերի 18-ին Լոռու մարզի Վանաձոր քաղաքում:

1997 թվականին ավարտել է Վանաձորի թիվ 27 միջնակարգ դպրոցը:

1998-2000թթ. պարտադիր զինվորական ծառայություն է անցել ՀՀ զինված ուժերում:

2001-2006թթ. սովորել է ՀՀ ոստիկանության ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետում և ստացել է իրավագետի որակավորում:

12.08.2006-03.09.2007թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի բաժնի հետաքննության խմբում՝ որպես տեսուչ:

03.09.2007-09.07.2014 թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության ՔԳՎ Լոռու մարզի քննչական բաժնում՝ որպես քննիչ, ապա՝ ավագ քննիչ:

10.07.2014-15.07.2015թթ. աշխատել է Լոռու մարզի դատախազությունում՝ որպես դատախազ:

15.07.2015-26.09.2019թթ. աշխատել է ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության վարչության դատախազ, ապա՝ որպես ավագ դատախազ:

26.09.2019-20.07.2020թթ. աշխատել է ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հատուկ քննչական ծառայության մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունում՝ որպես ավագ դատախազ:

20.07.2020 թվականից առ այսօր աշխատում է Լոռու մարզի դատախազությունում՝ որպես Լոռու մարզի դատախազի տեղակալ:

24.02.2021 թվականից հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան (փաստաբանական գործունեության արտոնագրի ժամկետը կասեցված է):

Արդարադատության երկրորդ դասի խորհրդական է:

Ամուսնացած է:

Ունի երկու երեխա:



ՍՈՒՐԵՆ ԵՐՎԱՆԴԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ծնվել է 1978 թվականի մայիսի 15-ին նախկին Կրասնոսելսկի շրջանի Թթուջուր գյուղում:

1995 թվականին ավարտել է Թթուջուր գյուղի միջնակարգ դպրոցը:

1996-1998թթ. անցել է պարտադիր զինվորական ծառայություն ՀՀ զինված ուժերում:

2004 թվականին ավարտել է Երևան պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2006 թվականին ավարտել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

01.10.2004-28.02.2005թթ. աշխատել է «Կենսատեխնոլոգիայի ԳՀԻ» ՓԲԸ-ում՝ որպես իրավախորհրդատու:

29.05.2006-10.07.2007թթ. աշխատել է ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության Սպանդարյանի առաջին հարկային տեսչությունում՝ որպես սոցիալական վճարների և եկամտահարկի բաժնի հարկային տեսուչ:

10.07.2007-30.04.2011թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Տավուշի մարզի քննչական բաժնի Դիլիջանի քննչական բաժանմունքում՝ որպես քննիչ, ապա՝ ավագ քննիչ:

02.05.2011-19.12.2012թթ. աշխատել է Լոռու մարզի դատախազությունում՝ որպես դատախազ:

19.12.2012-03.09.2013թթ. աշխատել է Երևան քաղաքի դատախազությունում՝ որպես դատախազ:

03.09.2013-04.11.2013թթ. աշխատել է Երևան քաղաքի դատախազությունում՝ որպես ավագ դատախազ:

04.11.2013-09.04.2018թթ. աշխատել է ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչությունում՝ որպես ավագ դատախազ:

09.04.2018-26.09.2019թթ. աշխատել է ՀՀ գլխավոր դատախազության մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ վերահսկողության վարչությունում՝ որպես ավագ դատախազ:

26.09.2019 թվականից առ այսօր աշխատում է ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունում՝ որպես վարչության պետի տեղակալ:

Ունի արդարադատության առաջին դասի խորհրդականի դասային աստիճան:

Ամուսնացած է, ունի դուստր և որդի:



ՏԻԳՐԱՆ ՄԵԽԱԿԻ ՂԱԶԱՐՅԱՆ

Ծնվել է 1993 թվականի մայիսի 7-ին Երևան քաղաքում:

2012 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2014 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2017 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտուրան:

2017 թվականին ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից շնորհվել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

01.10.2014–30.06.2015թթ. աշխատել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնում՝ որպես դասախոս:

01.02.2016-01.07.2016թ. աշխատել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնում՝ որպես դասախոս:

01.09.2016-01.02.2017թթ. աշխատել է Երևանի պետական համալսարանի եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնում՝ որպես դասախոս:

06.02.2017-16.06.2017թթ. աշխատել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնում՝ որպես դասախոս:

01.10.2017-31.01.2018թթ. աշխատել է Երևանի պետական համալսարանի եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնում՝ որպես դասախոս:

26.10.2018-31.01.2019թթ. աշխատել է Երևանի պետական համալսարանի եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնում՝ որպես դասախոս:

11.09.2019-31.01.2020թթ. աշխատել է Երևանի պետական համալսարանի եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնում՝ որպես դասախոս:

06.02.2020-29.02.2020թթ. աշխատել է Երևանի պետական համալսարանի եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնում՝ որպես դասախոս:

15.03.2016 թվականից առ այսօր աշխատում է «Թի Էմ Ջի ընդ Փարթնըրս» իրավաբանական ծառայություններ մատուցող ՍՊԸ-ում՝ որպեաս տնօրեն:



ԿԱՐԵՆ ՊԱՊԻՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ծնվել է 1987 թվականի ապրիլի 14-ին Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք գյուղում:

2004 թվականին ավարտել է Գեղարքունիքի մարզի Գանձակի թիվ 1 միջնակարգ դպրոցը:

2009 թվականին ավարտել է Հայաստանի Հանրապետության ոստիկանության ակադեմիայի իրավագիության ֆակուլտետը:

12.08.2009-01.02.2012թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության քրեական հետախուզության բաժանմունքում՝ որպես թմրաբիզնեսի և թմրամոլության դեմ պայքարի օպերլիազոր:

01.02.2012-25.06.2014թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության փորձաքրեագիտական բաժանմունքում՝ որպես փորձագետ

25.06.2014-09.10.2014թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության ՔԳՎ Երևան քաղաքի քննչական վարչության Մաշտոցի քննչական բաժնի 1-ին բաժանմունքում՝ որպես քննիչ:

09.10.2014-02.06.2016թթ. աշխատել է ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Մարտունու քննչական բաժնում՝ որպես քննիչ:

02.06.2016-27.10.2016թթ. աշխատել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում՝ որպես քննիչ:

27.10.2016-07.05.2018թթ. աշխատել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում՝ որպես ավագ քննիչ:

07.05.2018-06.11.2018թթ. աշխատել է ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության կոռուպցիոն, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների և կիբեռհանցագործությունների քննության վարչությունում՝ որպես հատկապես կարևոր գործերով քննիչ:

06.11.2018-06.12.2018թթ. աշխատել է ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության ընդհանուր բնույթի հանցագործությունների քննության վարչությունում՝ որպես հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ:

06.12.2018-23.09.2019թթ. աշխատել է ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության ընդհանուր բնույթի և ընտրական

հանցագործությունների քննության վարչությունում՝ որպես հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ:

23.09.2019-03.02.2020թթ. աշխատել է ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության կոռուպցիոն, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչությունում՝ որպես ՀԿԳ ավագ քննիչ:

03.02.2020 թվականից առ այսօր աշխատում է ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության կոռուպցիոն, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչությունում՝ որպես պետի տեղակալ (ՀԿԳ ավագ քննիչ):

Ամուսնացած է:



ԿԱՐԵՆ ԱՐՄԵՆԱԿԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ծնվել է 1975 թվականի մարտի 30-ին Երևան քաղաքում:

1992 թվականին ավարտել է Արտաշատի շրջանի Շահումյան գյուղի միջնակարգ դպրոցը:

1993-1998թթ. սովորել է ՀՀ ՆԳՆ բարձրագույն դպրոցում՝ իրավագիտություն մասնագիտությամբ և ստացել իրավաբանի որակավորում:

1998-2002թթ. աշխատել է ՀՀ ՆԳՆ քննչական վարչության Լոռու մարզային քննչական բաժնում՝ որպես քննիչ:

2002-2004 թթ. աշխատել է ՀՀ ՆԳՆ քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոնի քննչական բաժնում՝ որպես քննիչ:

2004-2013թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության ճանապարհատրանսպորտային հանցագործությունների քննության բաժնում՝ որպես քննիչ, ավագ քննիչ, հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ, ապա բաժնի պետի տեղակալ:

2013-2017թթ. աշխատել է ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչությունում՝ որպես դատախազ:

2017-2019թթ. աշխատել է Երևան քաղաքի դատախազությունում՝ որպես ավագ դատախազ:

2019 թվականից առ այսօր զբաղեցնում է Շենգավիթ վարչական շրջանի դատախազության ավագ դատախազի պաշտոնը:

ՀՀ զինված ուժերում չի ծառայել՝ ՀՀ ՆԳՆ բարձրագույն դպրոցում սովորելու կապակցությամբ:

Ամուսնացած է: Ունի երեք երեխա:



ՄԵՐԻ ԱՂԱԲԵԿԻ ՄՈՍԻՆՅԱՆ

Ծնվել է 1994 թվականի հոկտեմբերի 27-ին Լոռու մարզի Վանաձոր քաղաքում:

09.2008-05.2008թթ. սովորել է Մղարթ գյուղի հիմնական դպրոցում:

09.2008-06.2012թթ. սովորել է Վանաձորի Ծովակալ Իսակովի անվան թիվ 23 միջնակարգ դպրոցում:

2016 թվականին գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2018 թվականին գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

10.2018-09.2019թթ. սովորել է Համբուրգի համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մասգիտարատուրայում:

2021 թվականից սովորում է ՀՀ փաստաբանների դպրոցում (քաղաքացիաիրավական (վարչաիրավական) մասնագիտացում):

19.01.2017-05.09.2018թթ. աշխատել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

18.03.2020-17.05.2021թթ. աշխատել է Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնում՝ որպես գլխավոր մասնագետ:

17.05.2021 թվականից առ այսօր աշխատում է Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնում՝ որպես բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար:

Համդիսանում է Հայաստանի Հանրապետության պետական ծառայության 1-ին դասի խորհրդական:

Ամուսնացած չի:



Գիվի Համլետի Հովհաննիսյան

Ծնվել է 1978 թվականի օգոստոսի 5-ին Լոռու մարզի Ալավերդի քաղաքում:

1985-1995թթ. ընդունվել և ավարտել է Երևանի Մաշտոցի շրջանի թիվ 22 միջնակարգ դպրոցը:

1995-1999թթ. ընդունվել և ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

1999-2001թթ. անցել է պարտադիր զինվորական ծառայություն ՀՀ զինված ուժերում և զորացրվել որպես դասակի հրամանատար ավագի կոչումով:

2002-2008թթ. աշխատել է ՀՀ ոստիկանությունում՝ նախ որպես ՀՀ ՆԳՆ քննչական գլխավոր վարչության 1-ին վարչության Շենգավիթի քննչական բաժնի քննիչ, ապա ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթի քննչական բաժնի քննիչ:

2008 թվականի հոկտեմբերի 14-ից առ այսօր հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ փաստաբան և զբաղվում է փաստաբանական գործունեությամբ:

Ամուսնացած է: Ունի երկու երեխա:



Վիրաբ Ալբերտի Վարդանյան

Ծնվել է 1995 թվականի հուլիսի 16-ին Երևան քաղաքում:

2001-2010 թթ. գերազանցությամբ սովորել է Ա. Ս. Պուշկինի անվան թիվ 8 միջնակարգ դպրոցում:

2010-2011 թթ. սովորել է ՌԴ, քաղաք Եկատերինբուրգի թիվ 152 միջնակարգ դպրոցում:

2015 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2017 թվականին գերազանցությամբ ավարտել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2017 թվականին «Լավագույն մագիստրոս» հանրապետական մրցույթում հասարակագիտական գիտությունների բնագավառում ճանաչվել է հաղթող, ինչի կապակցությամբ պարգևատրվել է ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից:

2018 թվականին գերազանցությամբ ավարտել է ՀԱԱՀ-ի ֆինանսների կառավարում բաժինը:

2016-2017թթ. հանդիսացել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի խորհրդի անդամ:

2017 թվականին ընդունվել է ասպիրանտուրա՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի Իրավագիտության ամբիոնում՝ հանրային իրավունք մասնագիտությամբ:

Իրավաբանական գիտությունների թեկնածու է:

21.02.2017-25.12.2017թթ. աշխատել է Դատական դեպարտամենտի իրավական վերլուծության վարչության Իրավական վերլուծության և դատական հանձնարարությունների բաժնում՝ որպես գործավար:

25.12.2017-01.11.2018թթ. աշխատել է ՀՀ արդարադատության խորհրդի աշխատակազմում՝ որպես կրտսեր մասնագետ:

01.11.2018-23.06.2021թթ. աշխատել է Դատական դեպարտամենտի դատավորների ընդհանուր ժողովի և դատարանների աշխատակազմերի գործունեության ապահովման վարչության Դատավորների ընդհանուր ժողովի և հանձնաժողովների գործունեության ապահովման բաժնում՝ որպես առաջատար մասնագետ:

23.06.2021 թվականից առ այսօր աշխատում է Դատական դեպարտամենտի դատավորների ընդհանուր ժողովի և դատարանների աշխատակազմերի

գործունեության ապահովման վարչության Դատարանների աշխատակազմերի գործունեության ապահովմանն օժանդակող բաժնում՝ որպես գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

2020 թվականից առ այսօր դասավանդում է Մոսկվայի Սկրյաբինի անվան ակադեմիայի երևանյան մասնաճյուղում:

Ունի հրապարակված շուրջ մեկ տասնյակ գիտական հոդվածներ և մեկ մենագրություն: Ամուսնացած չէ:



ՇՈՒՇԱՆ ԳԵՂԱՄԻ ՎԱՆՈՅԱՆ

Ծնվել է 28.05.1989 թվականի մայիսի 28-ին Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքում:

1996-1999թթ. և 2000-2006թթ. սովորել է Էջմիածին քաղաքի Անդրանիկ Օզանյանի անվան թիվ 12 միջնակարգ դպրոցում:

1999-2000թթ. սովորել է Էջմիածին քաղաքի Ներսիսյան վարժարանում:

2010 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետի բակալավրիատը:

2013 թվականին ավարտել է Հյուսիսային համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2020 թվականին ավարտել է «Մարտիգ» Արտաքին տնտեսական կապերի համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

23.08.2010-26.05.2015թթ. աշխատել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի գործավար:

26.05.2015-24.12.2017թթ. աշխատել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

24.12.2017թ.-ից առ այսօր աշխատում եմ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

Ամուսնացած չէ:



ԱՐԱՄ ԳՐԻՇԱՅԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ծնվել է 1967 թվականի ապրիլի 6-ին Տավուշի մարզի Բերդ քաղաքում:

1974-1984թթ. սովորել է Երևանի Սովետական շրջանի թիվ 87 միջնակարգ դպրոցում:

1984-1991թթ. ընդունվել և ավարտել է Երևանի աշխատանքային Կարմիր դրոշի շքանշանակիր պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը:

28.06.1984-12.06.1985թթ. աշխատել է Երևանի Պատմության հուշարձանների վերանորոգման արհեստանոցում՝ որպես բանվոր:

1985-1987թթ. անցել է պարտադիր զինվորական ծառայություն ԽՍՀՄ զինված ուժերում:

25.07.1991-28.05.1992թթ. աշխատել է «Լիլիթ» ՓՁ-ում, որպես իրավախորհրդատու:

03.06.1992-22.09.1997թթ. աշխատել է Վայքի միջշրջանային դատախազությունում՝ որպես քննիչ:

22.09.1997-12.01.1999թթ. աշխատել է Սևանի միջշրջանային դատախազությունում՝ որպես ավագ քննիչ :

12.01.1999-31.08.1999թթ. աշխատել է Գեղարքունիքի մարզի դատախազությունում՝ որպես ավագ քննիչ:

31.08.1999-30.04.2001թթ. աշխատել է Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի դատախազությունում՝ որպես ավագ քննիչ:

30.04.2001-18.11.2001թթ. աշխատել է Երևան քաղաքի դատախազությունում՝ որպես քննիչ:

18.11.2001-23.03.2007թթ. աշխատել է Երևան քաղաքի դատախազությունում՝ որպես ավագ քննիչ :

23.03.2007-13.11.2007թթ. աշխատել է Երևան քաղաքի դատախազությունում՝ որպես Երևան քաղաքի դատախազի օգնական:

13.11.2007- 30.11.2007թթ. աշխատել է ՀՀ դատախազությունում՝ որպես ՀՀ գլխավոր դատախազին առընթեր ՀԿԳ քննիչ:

07.12.2007-18.11.2013թթ. աշխատել է ՀՀ հատուկ քննչական ծառայությունում՝ որպես ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ:

21.11.2013-02.06.2014թթ. աշխատել է ՀՀ գլխավոր դատախազությունում՝ որպես ԳԳ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության վարչության դատախազ :

17.12.2014-12.03.2015թթ. աշխատել է ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում՝ որպես տնօրենի խորհրդական:

01.11.2018-25.10.2021թթ. աշխատել է ՀՀ հատուկ քննչական ծառայությունում՝ որպես ծառայության պետի խորհրդական:

25.10.2021 թվականից առ այսօր աշխատում է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում՝ որպես կոմիտեի նախագահի խորհրդական:

Ամուսնացած է:

Ունի երկու երեխա:



ՍԱՐԳԻՍ ՍԻՄՈՆԻ ԴԱԴՈՅԱՆ

Ծնվել է 1990 թվականի փետրվարի 9-ին Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքում:

2007 թվականին ավարտել է Գավառ քաղաքի Հ.Թումանյանի անվան թիվ 4 միջնակարգ դպրոցը:

2011 թվականին ավարտել է Գավառի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2011-2013թթ. պարտադիր ժամկետային զինծառայության է անցել ՀՀ զինված ուժերում:

05.12.2013-30.09.2014թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Կոտայքի մարզի քննչական բաժնի Նաիրիի քննչական բաժանմունքում՝ որպես քննիչ:

30.09.2014-05.05.2018թթ. աշխատել է ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Նաիրիի քննչական բաժնում՝ որպես քննիչ:

05.05.2018-14.08.2019թթ. աշխատել է ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչությունում՝ որպես ավագ քննիչ:

19.08.2019 թվականից առ այսօր աշխատում է ՀՀ ազգային անվտանգության քննչական դեպարտամենտի տնտեսական գործունեության, բնակչության առողջության դեմ ուղղված և ընդհանուր բնույթի հանցագործությունների գործերով քննության բաժնում՝ որպես ավագ քննիչ:

Խրախուսվել է «Անբասիր ծառայության համար» ու «Համագործակցության համար» մեդալներով:

Ամուսնացած չի:



ՂԱԶԱՐՅԱՆ ԽԱՉԻԿ ԿԱՐԱՊԵՏԻ

Ծնվել է 1989 թվականի հունվարի 3-ին Երևան քաղաքում:

2009 թվականին ավարտել է Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավաբանական ֆակուլտետի բակալավրիատը:

2011 թվականին ավարտել է Հայ-ռուսական Սլավոնական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի մագիստրատուրան:

2014 թվականին ավարտել է Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի ասպիրանտուրան:

2014 թվականին շնորհվել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

2007 թվականից մինչև 2010 թվականը աշխատել է <Տուկան> ՍՊԸ-ում՝ որպես տնօրեն:

2010 թվականից մինչև 2011 թվականը աշխատել է ՀՀ վարչական դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայությունում՝ որպես մասնագետ:

2011 թվականից մինչև 2014 թվականը աշխատել է ՀՀ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես աշխատակազմի ղեկավար:

2014 թվականից մինչև 2015 թվականը աշխատել է ՀՀ դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման վարչությունում՝ որպես վարչության պետի տեղակալ:

2015 թվականից մինչև 2017 թվականը աշխատել է ՀՀ դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման և վիճակագրության վարչությունում՝ որպես վարչության պետի տեղակալ, դատական պրակտիկայի ամփոփման բաժնի պետ:

11.07.2017-05.10.2018թթ. աշխատել է ՀՀ դատական դեպարտամենտի իրավական վերլուծության վարչությունում՝ որպես վարչության պետ:

05.10.2018-19.07.2021թթ. աշխատել է Դատական դեպարտամենտի Դատավորների ընդհանուր ժողովի և դատարանների աշխատակազմերի գործունեության ապահովման վարչությունում՝ որպես վարչության պետ:

19.07.2021-16.11.2021թթ. աշխատել է Դատական դեպարտամենտում՝ որպես Դատական դեպարտամենտի ղեկավարի պաշտոնակատար:

2021 թվականի նոյեմբերի 16 թվականից առ այսօր աշխատում է Դատական դեպարտամենտում՝ որպես Դատական դեպարտամենտի ղեկավարի առաջին տեղակալ:

2010-2011թթ. դասավանդել է ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ ՊՈԱԿ-ում:

2017 թվականից դասավանդում է Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանում:

Հեղինակ է հինգ գիտական հոդվածների:

Ունի ՀՀ դատական ծառայության առաջին դասի խորհրդականի դասային աստիճան:

Ամուսնացած է, ունի երկու երեխա: